



**ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
2009-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

# Բովանդակություն

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	4
2. ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ	5
2.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	5
2.2. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ	6
2.3. ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	7
2.4. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻՋՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ	7
2.5. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	8
2.5.1. Ազգային հաշիվների համակարգ	8
2.5.2. Արդյունաբերություն	9
2.5.3. Գյուղատնտեսություն	10
2.5.4. Շինարարություն	10
2.5.5. Տրանսպորտ և կապ	11
2.5.6. Առևտուր և այլ ծառայություններ	12
2.5.7. Գներ և սակագներ	12
2.5.8. Աշխատանքի շուկա	13
2.6. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ	14
2.7. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ	14
2.8. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
2.8.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	15
2.8.2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	15
2.8.3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	16
2.8.4. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	16
2.8.5. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	16
3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	17
4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ	17
5. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	18
6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	19
7. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	20
8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	21
9. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՆԱՐԿ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ	22
10. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿԶՔՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՍԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ	26

Սույն հաշվետվությունը մշակվել է ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջների և արտացոլում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2009-2011 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով<sup>1</sup>(այսուհետ՝ Եռամյա ծրագիր) սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները մշակվել և իրականացվել են հաշվի առնելով երկրի ցուցանիշների՝ միջազգային վիճակագրական չափանիշների հետ համադրելիությունը, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով՝ ցուցանիշների հնարավոր կայուն պարբերականությունը, ինչպես նաև տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների (աշխատանքների) իրագործման ենթատեքստով՝ պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների (ֆինանսավորման) հետ համաչափությունը:

Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից յուրաքանչյուր տարի հաստատվել են պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով, որոնք համաձայն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, ներառել են հետևյալ պարտադիր բաղադրիչները. վիճակագրական աշխատանքների ցանկը, դրանց կատարման ժամկետները, ընդգրկման դաշտը, ինչպես նաև դիտարկումների ձևերը, վիճակագրական ցուցանիշների տրամադրման պարբերականությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից իրականացման ենթակա հետազոտությունների, հրատարակվելիք վիճակագրական ժողովածուների, տեղեկագրերի և այլ հրատարակումների ցանկը և պարբերականությունը, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ վարչական ռեզիստրների ու դրանց կողմից ներկայացվող ամփոփ վիճակագրական տեղեկությունների (տվյալների) ցանկը, վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը, անվճար տրամադրվող տեղեկատվության կազմը և տրամադրման կարգը:

2009, 2010 և 2011 թվականների տարեկան Ծրագրերը հաստատվել են Խորհրդի, համապատասխանաբար 2009թ. հունվարի 26-ի N1-Ն, 2010թ. հունվարի 18-ի N1-Ն և 2011թ. հունվարի 18-ի N1-Ն որոշումներով (հրապարակված են N3(9) 23.02.2009թ., N3(25) 15.02.2010թ., N3(42) 01.02.2011թ ԼԳՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերում):

Տարեկան Ծրագրերից համապատասխան քաղվածքները գրություններով ներկայացվել են վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններին: Ծրագրերի նախագծերը հանրային քննարկման նպատակով նախօրոք տեղադրվել են Ծառայության պաշտոնական կայքում: Միաժամանակ զանգվածային լրատվամիջոցներով ամփոփ տեսքով տարածվել են վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվելիք հաշվետվությունների ցանկը, ներկայացման պարբերականությունը և ժամկետները:

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան Ծրագրերով սահմանված աշխատանքները (միջոցառումները), հաշվետու ժամանակահատվածում նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 4390 միավոր (այդ թվում ըստ տարիների՝ համապատասխանաբար 1455, 1431 և 1504), որից իրականացվել են 4371-ը (այդ թվում ըստ տարիների՝ համապատասխանաբար 1450, 1425 և 1496<sup>2</sup>) կամ ընդամենի 99.6 տոկոսը: Ինչ վերաբերում է նախատեսված և չիրականացված

<sup>1</sup>Ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2008թ. նոյեմբերի 26-ին: Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 36(108), 30.12.2008թ.

<sup>2</sup>Հիմք՝ վերը հիշատակված տարեկան ծրագրերի կատարման հրապարակված հաշվետվությունները («2009թ.պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր») կատարման հաշվետվությունը հաստատված Խորհրդի 08 փետրվարի 2010թ. N2-Ն որոշմամբ, Ստեփանակերտ-2010, 51 էջ, «2010թ. պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր») կատարման հաշվետվությունը հաստատված Խորհրդի 04 փետրվարի 2011թ. N2-Ն որոշմամբ, Ստեփանակերտ - 2011, 51 էջ, «2011թ. պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր») կատարման հաշվետվությունը հաստատված Խորհրդի 07 փետրվարի 2012թ. N2-Ա որոշմամբ, Ստեփանակերտ-2012, 54 էջ):

աշխատանքներին (ընդամենի 0.4 տոկոսը), ապա դրանք չեն կատարվել հիմնականում առանձին պետական մարմինների կողմից ոչ լիակատար վարչական ռեզիստրների վարման պատճառով:

## **ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունը խարսխվել է ազատական տնտեսակարգի կառուցման, քաղաքացիական հասարակարգի ձևավորման և ժողովրդավարության սկզբունքների ծավալման քաղաքականության իրագործման հիմունքներին:

Վիճակագրությունը ցանկացած երկրում մշտապես դատապարտված է գտնվելու (զբաղվելու) վիճակագրական տեղեկատվության սպառողների, սկզբնական վիճակագրական տեղեկություններ տրամադրողների և հարկատուների կողմից վիճակագրությանը հատկացվող խրոնիկ անբավարար ռեսուրսների հակադրության «եռանկյունու» կենտրոնում (որոնց խնդիրներն ու շահերը տարաբեռ են), և դրանով պայմանավորված՝ վիճակագրությունը գործ ունի ոչ թե երկրնտրանքային փիլիսոփայության մենեջմենթի, այլ բազմընտրանքային մատրիցայով բնութագրվող փիլիսոփայությամբ մենեջմենթի հետ: Մյուս կողմից՝ վիճակագրությունը գործ ունի ևս մեկ բարդ եռանկյունու հետ, որի հակադիր բեռներն են ժամանակը, ցուցանիշների ամբողջականությունը և որակը, ինչը գիտական վիճակագրության առանձնահատկություններից է (այն դատապարտված է երևույթի վերաբերյալ կիրառելու գիտական արստրահում, հաշվի առնել վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկվածների կոմունիկացիոն (մասնագիտական) ունակությունները և տեղեկատվության արդիականության մասին սպառողների պատկերացումները):

Հաշվետու ժամանակահատվածում նշված բազմագործոն (մատրիցային) խնդիրների լուծման հիմնական ուղղություններից է եղել վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը և դրա հիման վրա՝ վիճակագրական հրապարակումների կատարելագործումը, ժամանակի կարճ հատվածում վիճակագրական տեղեկատվության նկատմամբ սպառողների ընթացիկ պահանջարկի հնարավորինս բավարարումը: Տվյալների արժանահավատության ապահովման ոլորտում որդեգրվել և հնարավորինս իրագործվել է սկզբնական, անվանական տվյալների գաղտնիության սկզբունքի վրա խարսխված՝ «տեղեկատվության տրամադրող-վիճակագիր» երկխոսային համակարգում փոխադարձ վստահության և գործընկերության հարաբերությունների ձևավորման վարքագիծը: Տեղեկատվության օպերատիվության ապահովումը ենթադրում է սպառողներին պահանջվող որակի և ծավալի տեղեկատվության տրամադրում՝ սահմանված ժամկետներում, մշակված ձևով (թղթային, մագնիսական կրիչներով, ինտերնետով և այլն): Սակայն այդ բնագավառում Ծառայությունը, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվել է ռեսուրսների(ֆինանսական, կադրային և այլն) ռեալ սահմանափակումների բարդությին:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Եռամյա ծրագրով սահմանված դրույթներն ու դրանց հիմքում դրված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները, հաշվետու ժամանակահատվածում վիճակագրության զարգացումն իրականացվել է հետևյալ հիմնական միջոցառումային ծրագրերի շրջանակում.

ա) վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացների շարունակում, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը.

բ) վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ Ծառայության վիճակագրական համագործակցության շարունակում և ընդլայնում.

գ) վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքների (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի») շարունակում, ինչը ենթադրում է նաև Ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում.

դ) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի

միասնականացման աշխատանքների շարունակում, միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները:

ե) բիզնես-ռեզիստրի տվյալների բազայի (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) պարբերաբար (նվազագույնը՝ ամենամյա) համալրման, արդիականացման ու ամբողջականացման և տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրման ու կիրառման ուղղությամբ աստիճանական անցման նախադրյալների ձևավորում:

զ) տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողմնորոշման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչ, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգիչ, վիճակագրական միավորների դասակարգիչ և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքների իրականացում:

է) վարչական ռեզիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկման աշխատանքների իրականացում՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը:

ը) տեղական (համայնքային) վարչական ռեզիստրների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմի ու բովանդակության կատարելագործում և ընդլայնում:

թ) գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքների շարունակում:

ժ) ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության բարձրացում՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման միջոցով տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման միջոցները և մեթոդները:

ժա) վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով՝ վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմի, բովանդակության ու թեմատիկ ընդգրկման ընդլայնում, հաշվի առնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները:

ժբ) վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար Ծառայության պաշտոնական ինտերնետային կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմի կատարելագործում:

## **ՄԱՍ 2. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ**

Հաշվի առնելով Եռամյա ծրագրով սահմանված՝ վիճակագրության զարգացման առումով ռազմավարական ուղղությունները, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ընդհանուր գործառնության ինտեգրալ հիմնական աշխատանքները (միջոցառումները):

### **2.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է Խորհրդի 42 նիստ (այդ թվում՝ 2009թ.՝ 12, 2010թ.՝ 15 և 2011թ.՝ 15): Նիստերի ընթացքում քննարկվել է 114 հարց (այդ թվում՝ 2009թ.՝ 36, 2010թ.՝ 37 և 2011թ.՝ 41) և արդյունքում ընդունվել 114 որոշում (այդ թվում՝ 2009թ.՝ 36, 2010թ.՝ 37 և 2011թ.՝ 41) որոշում, որից՝ 59 նորմատիվ (այդ թվում՝ 2009թ.՝ 18, 2010թ.՝ 18 և 2011թ.՝ 23), 25 անհատական (այդ թվում՝ 2009թ.՝ 8, 2010թ.՝ 9 և 2011թ.՝ 8) և 30 արձանագրային (այդ թվում՝ 2009թ.՝ 10, 2010թ.՝ 10 և 2011թ.՝ 10):

1. «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքից բխող օրենսդրական դաշտի ձևավորման և բարելավման նպատակով՝ հաշվետու ժամանակաշրջանում Խորհրդի կողմից Լեռնային Դարաբաղի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվել ներքոթվարկյալ օրենքների նախագծերը:

ա) «Լեռնային Դարաբաղի Հանրապետության 2012-2014 թվականների պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության

օրենքի նախագիծը: Վերջինս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո(2011թ. սեպտեմբերի 27-ի N726որոշում) ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով և ընդունվել նրա կողմից 2011թ. դեկտեմբերի 24-ին:

բ)Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերք արտադրողների համատարած հաշվառման նախապատրաստման, կազմակերպման, անցկացման, ստացված արդյունքների մշակման, ամփոփման, հրապարակման, պահպանման նպատակով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը: Վերջինս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո(2010թ. հոկտեմբերի 26-ի N677որոշում) ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով և ընդունվել նրա կողմից 2010թ. դեկտեմբերի 16-ին:

2.Խորհրդի 2009թ. ապրիլի 8-ի N8-Ն որոշմամբ հաստատվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006-2008թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը», որն արտացոլում է «2006-2008թվականների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով<sup>3</sup>: սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

3.Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Խորհրդի նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտերի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 59 նորմատիվ իրավական ակտեր(որից՝56 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ), այդ թվում ըստ տարիների. 2009թ.՝ 18 (17), 2010թ.՝ 18 (17) և 2011թ.՝ 23 (22):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների դասակարգիչներով սահմանված սկզբունքներին ու մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման և վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ողջամիտ ժամկետներ սահմանելու նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են վիճակագրական դիտարկման մի շարք փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու պարբերականությունը:

## 2.2. ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Վիճակագրական գիտության առանձնահատկություններից է մեթոդաբանության մշտական կատարելագործումն ու զարգացումը՝ վիճակագրական սխալների և շեղումների առավելագույնս կրճատման ուղղությամբ, որոնք անխուսափելի են հաշվառում իրականացնելիս: Վիճակագրական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը մշտապես ենթարկվում է լուրջ վերանայումների:

Վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման, վիճակագրությունում միջազգային չափանիշների ներդրման և կիրառման նկատառումներով պայմանավորված՝ անցում է կատարվել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների կիրառմանը: Ծառայությունում վիճակագրական աշխատանքները(ցուցանիշները) տարվում են (հաշվարկվում են ) Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից կիրառվող «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» համապատասխան:

Պետական վիճակագրության բնագավառում պարտադիր կիրառման նպատակով ներդրվել է «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը»:

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ հաստատվող վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

<sup>3</sup> Ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2005թ. դեկտեմբերի 23-ին:

Ի լրումն նշվածի, հաշվի առնելով օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև նախկինում ընդունված մի շարք որոշումներով հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերում և դրանց լրացման հրահանգներում:

### 2.3 ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում ընդլայնվել են ռեսպոնդենտների հետ տարվող աշխատանքները. ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից տարվա ընթացքում ընդունված որոշումներով հաստատված վիճակագրական հաշվետվությունների ձևաթղթերի անվճար տրամադրման և դրանց լրացման հրահանգներին ծանոթացման միջոցով զգալիորեն ավելացել են վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողների թիվը, ինչպես նաև դրանց կողմից հավաքագրվող հաշվետվությունների թիվը: Դրան նպաստել է նաև ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վիճակագրական հաշվետվությունները ուշացնողների նկատմամբ վարչական վարույթների կայացումը: Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում քննվել է 916 վարչական գործ (այդ թվում՝ 2009թ.՝ 378, 2010թ.՝ 280, 2011թ.՝ 258 ), որից 5-ը կարճվել է (այդ թվում՝ 2009թ.՝ 1, 2010թ.՝ 1, 2011թ.՝ 3): Արդյունքում 378 անձինք (այդ թվում՝ 2009թ.՝ 183, 2010թ.՝ 116, 2011թ.՝ 79) ստացել են նախազգուշացում, 533-ը (այդ թվում՝ 2009թ.՝ 194-ը, 2010թ.՝ 163-ը, 2011թ.՝ 176-ը) տուգանվել են: Պետական բյուջե հաշվեգրված վարչական տուգանքի գումարը կազմել է 11466.0հազ. դրամ(այդ թվում՝ 2009թ՝ 4231.0հազ. դրամ, 2010թ.՝ 3350.0հազ. դրամ, 2011թ.՝ 3885.0հազ. դրամ), որից ըստ տարիների մարվել է 2009թ.՝ 3660.0հազ. դրամը կամ 86.5տոկոսը, 2010թ.՝ 3040.0հազ. դրամը կամ 90.7տոկոսը, 2011թ.՝ 2960.0հազ. դրամը կամ 76.2 տոկոսը:

Զգալիորեն ընդլայնվել են նաև նոր գրանցված սուբյեկտների հետ իրազեկման, գործող սուբյեկտներին վիճակագրական դաշտ ընդգրկման և չգործողների նկատմամբ վերահսկողական աշխատանքների շրջանակը: Վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողների վրա դրված «քեռի» նվազեցման նակատառումով վերանայվել են որոշ հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը, ընտրանքի շրջանակը:

### 2.4 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կողմնորման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից շարունակվել են համապատասխան դասակարգիչների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

1. Մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են նաև տնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Ծառայությունը պետական վիճակագրական դիտարկումները, առկա հնարավորություններին համապատասխան, իրականացնում է համատարած հաշվառմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատական տնտեսակարգին բնորոշ է տնտեսական և այլ բնույթի գործունեությունների ու դրանք իրականացնող սուբյեկտների տեսակների շեշտակի աճը, ուղղակի հաշվետվական վիճակագրական դասական գործիքների (համատարած դիտարկման) լայնամասշտաբ կիրառման անհնարինությամբ պայմանավորված անհրաժեշտություն էր առաջացել պետական վիճակագրության համակարգում աստիճանաբար անցում կատարել ընտրանքային եղանակների կիրառմանը, ինչը նյութական, մարդկային և ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պայմաններում, հնարավորություն է ընձեռում նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածությունը: Նշված խնդիրների լուծման համար անփոխարինելի աղբյուր են հանդիսանում հատկապես վիճակագրական ռեզիստրները, որոնք լայն տարածում ունեն միջազգային վիճակագրական պրակտիկայում: Ընդ որում, ի տարբերություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող վարչական ռեզիստրների, Ծառայությունը վարում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բիզնես ռեզիստրներ, որոնք կրում են զուտ վիճակագրական բնույթ և հիմնվում են միջազգային ֆինանսական, տնտեսական, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ընդունված, ինչպես նաև ազգային չափանիշներին համապատասխան վիճակագրության միասնական մեթոդաբանության վրա: Բիզնես ռեզիստրներն անփոխարինելի աղբյուր են վիճակագրական դիտարկման համար ընտրանքի դաշտի նախապատրաստման, կազմակերպությունների շարժի

ուսումնասիրության(ստեղծում, գործունեության դադարեցում, գործունեության տեսակի փոփոխություն և այլն), տնտեսական ցուցանիշների հավաքագրման և այլնի համար:

Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով հաշվետու ժամանակահատվածում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Ծառայության բիզնես ռեգիստրի կայացման ուղղությամբ, օգտագործելով տեղեկատվության հավաքագրման ինչպես ուղղակի, այնպես և անուղղակի (վարչական ռեգիստրների միջոցով) աղբյուրները:

Խորհրդի կողմից 2010թ. դեկտեմբերի 13-ի N22-Ն և N23-Ն որոշումներով հաստատվել են «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը և լրացման հրահանգը» և «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես(ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը և լրացման հրահանգը» և միաժամանակ ուժը կորցրած են ճանաչվել Խորհրդի 2007թ. դեկտեմբերի 18-ի N48 և N49 որոշումները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բաժնից, որպես համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմին, սահմանված ժամկետներում և պարբերականությամբ ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ Ծառայության բիզնես ռեգիստրի վարման համար անհրաժեշտ տվյալները:

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բիզնես-ռեգիստրի վարման համար անհրաժեշտ տվյալների արդիականացման, համալրման և ամբողջացման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում անց է կացվել բիզնես-ռեգիստրի հետազոտություն,

-2009թ. բիզնես-ռեգիստրի հետազոտությամբ ընդգրկվել են ԼՂՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված 2892 առևտրային իրավաբանական անձինք և 3291 անհատ ձեռնարկատերեր, որոնցից գործել են համապատասխանաբար՝ 950-ը և 1778-ը, չեն գործել՝ 907-ը և 1058-ը, իսկ 1035-ը և 455-ը՝ չեն հայտնաբերվել:

Իրականացվել է գործող 950 իրավաբանական անձանց և 1778 անհատ ձեռնարկատերերի 2008թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, տնտեսական գործունեության տեսակների, ըստ հասույթի, ինչպես նաև հաշվետու տարում ըստ գործելու տևողության և այլն) արդիականացումը:

-2010թ. բիզնես-ռեգիստրի հետազոտությամբ ընդգրկվել են ԼՂՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված 2999 առևտրային իրավաբանական անձինք և 4094 անհատ ձեռնարկատերեր, որոնցից գործել են համապատասխանաբար՝ 932-ը և 2311-ը, չեն գործել՝ 1383-ը և 1275-ը, իսկ 684-ը և 508-ը՝ չեն հայտնաբերվել:

Իրականացվել է գործող 932 իրավաբանական անձանց և 2263 (48-ը հրաժարվել են տեղեկատվություն տրամադրել) անհատ ձեռնարկատերերի 2009թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, տնտեսական գործունեության տեսակների, ըստ հասույթի, ինչպես նաև հաշվետու տարում ըստ գործելու տևողության և այլն) արդիականացումը:

-2011թ. բիզնես-ռեգիստրի հետազոտությամբ ընդգրկվել են 3071 կազմակերպություն և 4703 անհատ ձեռնարկատերեր (40-ը՝ հրաժարվել են տեղեկատվություն տրամադրել), որոնցից գործել են համապատասխանաբար՝ 944-ը և 2520-ը չեն գործել՝ 1827-ը և 1275-ը, իսկ 597-ը և 316-ը՝ չեն հայտնաբերվել :

Իրականացվել է գործող 944 իրավաբանական անձանց և 2520 անհատ ձեռնարկատերերի 2010թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, տնտեսական գործունեության տեսակների, ըստ հասույթի, ինչպես նաև հաշվետու տարում ըստ գործելու տևողության և այլն) արդիականացումը:

## 2.5. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 2.5.1. Ազգային հաշիվների համակարգ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ազգային հաշիվների հաշվարկը իրականացվում է Ազգային հաշիվների համակարգի սկզբունքների և մեթոդաբանության հիմքերի վրա՝ ԱՀՀ-93 վերանայված տարբերակով: Ըստ շուկայական կառուցվածքների զարգացման այդ



մեթոդաբանությունն անընդհատ վերանայվում է, ավելացվում են անցումային ժամանակաշրջանին բնորոշ նոր ցուցանիշներ:

Աշխատանքներ են իրականացվել «Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ով սահմանվող գործունեության տեսակների խմբավորման ձևաչափերի ներդրման ուղղությամբ:

Ազգային հաշիվների համակարգում համախառն ներքին արդյունքի ցուցանիշն (ՀՆԱ) ունի առանցքային նշանակություն: ՀՆԱ-ի հաշվարկը կատարվել է եռամսյակային և տարեկան կտրվածքներով՝ ըստ տնտեսության ճյուղերի: Այն հաշվարկվել է ընթացիկ, հաշվետու և նախորդ տարվա գներով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՆԱ-ն հաշվարկվել է երկու մեթոդով՝ արտադրական և եկամուտների ձևավորման:

Արտադրական մեթոդն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների արտադրության փուլում: Արտադրական մեթոդով ՀՆԱ-ն հաշվարկվում է, որպես ճյուղերի և տնտեսության հատվածներում ստեղծված համախառն ավելացված արժեքների հանրագումար:

Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկը կատարվում է բաշխման փուլում: Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն որոշվում է որպես սկզբնական եկամուտների գումար, որը ռեզիդենտ-արտադրողի կողմից բաշխվել է ապրանքների և ծառայությունների արտադրության անմիջական մասնակիցների միջև: Այսինքն՝ դրանք ռեզիդենտ արտադրողի ծախսերն են՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը, արտադրության և ներմուծման գուտ հարկերը, ինչպես նաև համախառն շահույթ և խառը եկամուտը:

Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) կազմման առումով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և այլ մակրոտնտեսական ցուցանիշների ամբողջ տնտեսության, ինչպես նաև կառուցվածքային հատվածների և տնտեսական գործունեության տեսակների մակարդակով վիճակագրության վարման, հաշիվների կազմման աշխատանքներ,

- իրականացվել են ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) և ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարման աշխատանքներ:

Շարունակվել են ազգային հաշիվներում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքը» ամենամյա վիճակագրական ժողովածուները, որոնք ընդգրկել են 2008-2010թթ. ընկած ժամանակաշրջանները:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարելագործվել է «չդիտարկվող (ստվերային, ոչ ֆորմալ, անլեգալ) տնտեսության չափերի» գնահատման մեթոդաբանությունը:

#### *2.5.2. Արդյունաբերություն*

Հաշվետվային տվյալները հավաքագրվել են կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից՝ համատարած վիճակագրական դիտարկմամբ:

Իրականացվել են արդյունաբերության ոլորտի վիճակագրական դիտարկման փաստաթղթերի որոշ ցուցանիշների վերանայումներ և փոփոխություններ:

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով՝ վերածածկագրվել են արդյունաբերական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակները: Բացի այդ, արդյունաբերությունը բնութագրող տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացումը հնարավորություն է ընձեռել զգալիորեն նվազեցնել համապատասխան աշխատանքների կատարման (մշակման) ժամկետները, մեխանիկական սխալները:

Բնակչության կողմից հացի (հացաբուլկեղենի) սպառման ծավալները ճշտելու նպատակով՝ հաշվետու ժամանակաշրջանում անց են կացվել ամենամյա ընտրանքային հետազոտություններ, որոնց արդյունքների հիման վրա պատրաստվել են «Բնակչության կողմից հացի (հացաբուլկեղենի) սպառման ընտրանքային հետազոտության զեկույցը»-ները:

Կաթնամթերքի արտադրության, փայտամշակման և քարի վերամշակման ծավալները ճշտելու նպատակով կատարվել են փորձագիտական գնահատումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերությունը» ամենամյա վիճակագրական ժողովածուները, որոնք ընդգրկել են 2008-2010թթ. ընկած ժամանակաշրջանները:

### 2.5.3. Գյուղատնտեսություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական և քաղաքային համայնքներից, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ, համատարած դիտարկմամբ, հավաքագրվել և մշակվել են գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, մասնավորապես՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի, միջին բերքատվության, ըստ տեսակների անասնազվաքանակի, անասնապահական հիմնական մթերքի արտադրության, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսության համախառն արտադրանքի և այլնի վերաբերյալ:

Վիճակագրական տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով, գյուղատնտեսության վիճակագրության համար անհրաժեշտ բոլոր վիճակագրական դիտարկման փաստաթղթերի համար մշակվել և ներդրվել են համապատասխան համակարգչային ծրագրեր, ինչը հնարավորություն է ընձեռել նվազեցնել համապատասխան ցուցանիշների մշակման և ամփոփման համար անհրաժեշտ ժամկետները, մեխանիկական սխալները:

Գյուղատնտեսության ոլորտում ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված Խորհրդի կողմից հաստատվել են Ձև N29-գտ(հավելված)(տարեկան) «Ոռոգվող հողերի վրա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին», Ձև N 11-գնում (եռամսյակային) «Անասնի, թռչնի և ճագարի գնումների մասին», Ձև N 9-գնում (տարեկան) «Շաքարի ճակնդեղի, եթերայուղատու մշակաբույսերի, վայրի պտուղների և հատապտուղների, սնկերի, ընկույզի, մեղրի և շերամի բուժոժի գնումների մասին» պետական վիճակագրական հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները:

Իրականացվել է պետական վիճակագրական հաշվետվությունների 3 ձևերի (Ձև N 3-գտ «Գարնանացանի ընթացքի մասին» (տարին երեք անգամ), Ձև N 29-գտ (տարեկան) «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին», Ձև N 29-գտ (ամսական) «Բերքահավաքի, կերերի կուտակման և աշնանացանի ընթացքի մասին») արդիականացում, հավաքագրվող ցուցանիշների լրամշակում, ինչպես նաև դրանց լրացման հրահանգների վերանայում:

Գյուղատնտեսության վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը ուսումնասիրելու և ընդլայնելու, ինչպես նաև այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը կատարելագործելու նպատակով՝ 2009թ. իրականացվել է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընթացիկ ծախսերի և գյուղատնտեսական մթերքների իրացման ընտրանքային հետազոտություններ: Ընտրանքային հետազոտության արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

Աշխատանքներ են կատարվել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների ճշգրտման մեխանիզմների մշակման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսությունը» ամենամյա վիճակագրական ժողովածուները, որոնք ընդգրկել են 2008-2010թթ. ընկած ժամանակաշրջանները:

### 2.5.4. Շինարարություն

Իրականացվող շինարարական աշխատանքների համընդգրկունակության ապահովման նպատակով՝ մշտապես արդիականացվել և առավելագույնս ընդլայնվել է վիճակագրական հաշվառման ցանցը:

Վիճակագրական տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով՝ շինարարության վիճակագրության համար անհրաժեշտ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթերի համար մշակվել և ներդրվել են համապատասխան համակարգչային ծրագրեր, ինչը հնարավորություն է ընձեռել նվազեցնել համապատասխան ցուցանիշների մշակման և ամփոփման համար անհրաժեշտ ժամկետները, մեխանիկական սխալները:

Շինարարության ծավալը, այդ թվում՝ նաև բնակչության կողմից իրականացվող, ճշտելու նպատակով կատարվել է փորձագիտական զննահատում:

Վարչական ռեգիստրի ստեղծման և կատարելագործման ոլորտում Ծառայությունը համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր կապիտալ շինարարության վարչության (2011թ-ից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության) և Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շինարարությունը» ամենամյա վիճակագրական ժողովածուները, որոնք ընդգրկել են 2008-2010թթ. ընկած ժամանակաշրջանները:

#### 2.5.5.Տրանսպորտ և կապ

Հաշվետվային տվյալները հավաքագրվել են համատարած վիճակագրական դիտարկմամբ: Պետական վիճակագրական հաշվետվությունները հավաքագրվել են ինչպես կազմակերպություններից, այնպես էլ անհատ ձեռնարկատերերից:

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում Խորհրդի կողմից հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Փոստային և սուրհանդակային գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված ներդրվել է նոր «Փոստային և սուրհանդակային գործունեության մասին» Ձև թիվ 1-փոստ(եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունն ու դրա լրացման հրահանգը (30.09.2011թ. Խորհրդի 24-Ն որոշում):

Օդային տրանսպորտի գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով 2010թ. սեպտեմբերի 6-ի Խորհրդի նիստում հաստատվել է «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի ղարաբաղյան շարժակազմի արտադրանքի մասին» Ձև N 65-ավիա(տարեկան), իսկ 2011թ. ապրիլի 19-ի Խորհրդի նիստում՝ «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ՁևN12-ՔԱ (եռամսյակային) «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև N 12-ՔԱ(եռամսյակային) «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև N 34-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերը և լրացման հրահանգները(համապատասխանաբար, 15-Ն, 10-Ն, 11-Ն, 12-Ն որոշումները): Խորհրդի համապատասխան նիստերում համապատասխան որոշումներով հաստատվելուց հետո վերոշարադրյալ պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են ԼՂՀ արդարադատության նախարարությանը և ստացել պետական գրանցում:

Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության հիմնական ցուցանիշների(ուղևորափոխադրումներ, ուղևորաշրջանառություն, մեքենաների կատարած վազք և այլ ցուցանիշներ) ամբողջականությունն ապահովելու համար՝ 2010թ. իրականացվել է ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև այդ կազմակերպություններին պատկանող և համապատասխան երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների ընտրանքային հետազոտություն, որի արդյունքներով պատրաստվել է «Ուղևորափոխադրումների ընտրանքային հետազոտություն» վիճակագրական զեկույցը: Չեկույցում արտացոլված են ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության շրջանային կառուցվածքը և ծավալները, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները, ավտոտրանսպորտի վերաբերյալ ցուցանիշների վիճակագրական լրահաշվարկների համար կիրառելի գործակիցները:

Կապի ոլորտի ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ 2010թ. փոփոխության են ենթարկվել Ձև թիվ 18-ԿԱՊ (տարեկան), «Հեռագրական կապիտեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 31-ԿԱՊ (տարեկան), «Միջադաշային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-ԿԱՊ(տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերը (Խորհրդի 2010թ. մարտի 18-ի թիվ 4-Ն, 5-Ն, 6-Ն որոշումները):

Կապի ոլորտի գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, 2011թ. փոփոխության են ենթարկվել ՁևN13-ԿԱՊ(եռամսյակային) «Հեռուստառադիոձրագրերի կազմման և հեռարձակման, հեռախոսակցության գործունեությունից ստացված եկամուտների մասին», ՁևN11-ԿԱՊ(եռամսյակային) «Հեռագրական կապի և հեռախոսային ցանցի ծառայությունների մասին», Ձև N 31-ԿԱՊ (տարեկան) «Հեռագրական կապի մասին» պետական վիճակագրական հաշվետվություններն ու դրանց լրացման հրահանգները(Խորհրդի 2011թ. սեպտեմբերի 30-ի թիվ 19-Ն, 21-Ն, 23-Ն որոշումները):

Խորհրդի համապատասխան նիստերում հաստատվելուց հետո վերոշարադրյալ պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են ԼՂՀ արդարադատության նախարարությանը և ստացել պետական գրանցում:

#### 2.5.6. Առևտուր և այլ ծառայություններ

Հաշվետվային տվյալները հավաքագրվել են համատարած վիճակագրական դիտարկմամբ: Պետական վիճակագրական հաշվետվությունները հավաքագրվել են ինչպես կազմակերպություններից, այնպես էլ անհատ ձեռնարկատերերից:

Մանրաձախ ապրանքաշրջանառության և ծառայությունների իրական ծավալների ամբողջականությունն ապահովելու համար կատարվել են փորձագիտական գնահատումներ՝ ելնելով բնակչության դրամական եկամուտներից:

Սպառողական շուկայում ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված 2011թ. ներդրվել են «Առևտրի օբյեկտների քանակի և զբաղեցրած տարածքների մասին» Ձև N1-առսպաս(տարեկան) և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև N1-SS(եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևերը և դրանց լրացման հրահանգները:

Խորհրդի 01.03.2011թ. և 23.11.2011թ. նիստերում, համապատասխանաբար, 3-Ն և 27-Ն որոշումներով հաստատվելուց հետո վերոշարադրյալ պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանը և ստացել պետական գրանցում:

Մանրաձախ առևտրի սուբյեկտների վերաբերյալ տվյալների բազայի ընդլայնման, մանրաձախ առևտրաշրջանության չհաշվառված ծավալների գնահատման, ինչպես նաև բնակչությանը մատուցվող անհատական ծառայությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների արժանահավատության բարձրացման, չհաշվառված ծավալների գնահատման նպատակներով՝ համակարգի աշխատողների կողմից անց են կացվել մանրաձախ առևտրի և բնակչությանը անհատական ծառայություններ մատուցող սուբյեկտների ընտրանքային հետազոտություններ, որոնց արդյունքների հիման վրա պատրաստվել են համապատասխան զեկույցներ:

#### 2.5.7. Գներ և սակագներ

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման նկատառումով պարբերաբար (յուրաքանչյուր տարի) վերանայվել ու համալրվել են դիտարկման «զամբյուղը» ներկայացնող ապրանք(ծառայություն)-ներկայացուցիչների կազմն ու կառուցվածքը: Կատարվել են նաև ապրանք(ծառայություն)-ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի՝ չափման միավորի, մակնիշի և այլ չափանիշների փոփոխություններ ու ճշգրտումներ: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, կատարվել է սպառողական զամբյուղի վերահաշվարկ, դիտարկվող ապրանք-ծառայությունների ցանկի վերանայում, միջազգային դասակարգչին համապատասխանեցում:

Ընդհանուր առմամբ, սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 94000 միավոր գնային տվյալ: Սպառողական գների ինդեքսի վերաբերյալ տվյալներն ամփոփվել են ըստ հանրապետության և 7 հետազոտվող բնակավայրերի՝ 64 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 411 անվանում ապրանք (ծառայություն)- ներկայացուցիչներով:

Ծառայությունը 2011թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար բազիսային տարի է ընդունել 2010թ.(2006թ. փոխարեն) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները: Համաձայն սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2010թ. իրականացված 7872 տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված(ընտրանքային) հետազոտության արդյունքները, (2009թ. հոկտեմբերից 2010թ. սեպտեմբերը ներառյալ), կատարվել է ապրանք-ծառայությունների տեսակարար կշիռների վերահաշվարկ: Միաժամանակ կատարվել է նաև հանրապետությունում հետազոտվող 7 բնակավայրերի տեսակարար կշիռների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին 2010թ. փաստագրված շրջանային ցուցանիշները:

Համաձայն Եռամյա ծրագրի մաս 2-ի(գործառութային ոլորտների զարգացումն ապահովող միջոցառումների ծրագրերը) բաժին 2.1-ի(իրական հատված) 2.1.7. Գներ և սակագներ բաժնում

2009-2011թվականների ընթացքում սպառողական գների ինդեքսների հաշվարկներում պիտի ներառվեր նաև Քարվաճառ բնակավայրը: Վերջին երեք տարիների ընթացքում կատարվել է Քարվաճառի սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկում, որի արդյունքում պարզվել է, որ նշյալ բնակավայրում սպառողական զամբյուղում տեղ գտած 411 ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներից գրանցվել է միայն 75 ապրանքատեսակ, այսինքն մոտ 18 տոկոսը (մնացածը բացակայում է), բացի դրանից տվյալ քաղաքում գործում են 5 առևտրի օբյեկտներ, որոնք իրականացնում են հիմնականում պարենային ապրանքների վաճառք: Շահումյանի շրջանի բնակչության թվաքանակը շատ փոքր է և ԼՂՀ բնակչության կազմում ունի 2.0տոկոս տեսակարար կշիռ, իսկ մանրածախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ 1.0տոկոսից քիչ է, այդ իսկ պատճառով Քարվաճառի ընդգրկումը սպառողական գների ինդեքսների հաշվարկների մեջ չի բերի սպառողական գների ինդեքսի որևէ փոփոխության:

Ներկայացուցչականությունն ապահովելու և գնային տեղեկատվության արժանահավատության աստիճանն առավել բարձրացնելու նպատակով՝ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկը նախկինում դիտարկված 32արդյունաբերական բազային կազմակերպությունների(34 անվանում արտադրանք-ներկայացուցիչներ) փոխարեն կատարվել է 40արդյունաբերական բազային կազմակերպություններով՝ 41անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով: Ամբողջովին վերանայվել է գների հետազոտման համար բազային օբյեկտներ հանդիսացող արդյունաբերական կազմակերպությունների ցանկը:

Հանրապետության բոլոր համայնքներում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման գների, քանակի և ծավալների ամենամսյա դիտարկում: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել է հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը:

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ, օգտագործման համար կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային և տարեկան կտրվածքներով:

Շինարարության գների ինդեքսների հաշվարկման նպատակով շարունակվել է համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետ՝ շինարարության բաղադրատարրերի գների վերաբերյալ տեղեկատվության ապահովման համատեքստում:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Գները և գների ինդեքսները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.» ամենամյա վիճակագրական ժողովածուները, որոնցից յուրաքանչյուրը ընդգրկել է նախորդող չորս տարիներին վերաբերող տվյալներ:

#### 2.5.8. Աշխատանքի շուկա

Հաշվետվային տվյալները հավաքագրվել են համատարած վիճակագրական դիտարկմամբ: Պետական վիճակագրական հաշվետվությունները հավաքագրվել են ինչպես կազմակերպություններից, այնպես էլ անհատ ձեռնարկատերերից:

Վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և ներկայացման կիրառվող մեթոդաբանությունում Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ տրվող հասկացությունների ու սահմանումների ներդրման, ինչպես նաև հաշվարկվող ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նկատառումներով հնարավորինս վերանայվել են աշխատանքի վիճակագրությանն առնչվող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում ներառված ցուցանիշների կազմն ու կառուցվածքը, ինչպես նաև դրանց լրացման մեթոդական ցուցումներն ու հրահանգները: Նույն նկատառումներով հավաքագրվող ցուցանիշների համախումբը հնարավորինս դիտարկվել է նաև գենդերային և շրջանային կտրվածքով:

Կատարելագործվել են և՛ սկզբնական, և՛ ամփոփ տվյալների մշակման համակարգային ծրագրերը, ընդլայնվել ելքային աղյուսակների ցանկը:

Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության ինտեգրման եղանակով հաշվարկվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռն ըստ հանրապետության, զբաղվածների թվաքանակն՝ ըստ շրջանների, տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության հատվածների, սեռի:

Բնակչության սոցիալական վիճակի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով՝ 2009թ. հանրապետությունում անց է կացվել տնային տնտեսությունների ընթացիկ ծախսերի, սպառման և եկամտների ընտրանքային հետազոտություն, որի արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

Աշխատանքային ռեսուրսների փոփոխությունների բնույթի հստակեցման, աշխատաշուկայի վերաբերյալ հավաքագրվող վիճակագրական տվյալների որակի բարձրացման,

թաքնված զբաղվածության երևույթի գործոնային վիճակագրության ուսումնասիրության նպատակով հանրապետությունում 2011թ. անց է կացվել աշխատուժի և ոչ ֆորմալ զբաղվածության միանվագ ընտրանքային հետազոտություն, որի արդյունքների հիման վրա պատրաստվել է «Աշխատուժի և ոչ ֆորմալ զբաղվածությունը ԼՂՀ-ում միանվագ ընտրանքային հետազոտության զեկույցը»: Հետազոտությունն իրականացվել է հիմք ընդունելով միջազգային մեթոդաբանությամբ ներկայացված սահմանումները, չափանիշները, սկզբունքները և հասկացությունները:

## 2.6. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական, համայնքների բյուջեների տվյալների առումով հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունից պարբերաբար ստացվել, մշակվել, ամփոփվել և հրատարակվել են պետական և համայնքների(եռամսյակային պարբերականությամբ) բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ հաշվարկված Արժույթի միջազգային հիմնադրամի «Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001»(GFS-2001) ձեռնարկի մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների ու հասկացությունների հիման վրա:

Բանկային համակարգը բնութագրող վիճակագրական ցուցանիշների առումով՝ բանկերից պարբերաբար ստացվել, մշակվել, ամփոփվել և հրատարակվել են բանկային համակարգի վերաբերյալ վիճակագրական տվյալները (այդ թվում՝ արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքները՝ ամսական պարբերականությամբ):

Կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վիճակագրության բնագավառում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումներին համապատասխանեցնելու նպատակով գործողության մեջ է դրվել կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը բնութագրող վիճակագրական դիտարկման փաստաթղթերի նոր ձևերը:

Պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների, արտարժույթային փոխարժեքների դինամիկայի, սպահովագրական ընկերությունների գործունեությունը բնութագրող տվյալների հիման վրա յուրաքանչյուր տարի հրատարակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը» վիճակագրական ժողովածուները:

## 2.7. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի գծով ցուցանիշների հաշվարկման համար, ի թիվս պետական վիճակագրական հաշվետվությունների միջոցով հավաքագրվող տեղեկատվության, օգտագործվել են նաև համապատասխան ոլորտի վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից ներկայացվող սպրանքների արտահանման և ներմուծման վիճակագրության տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ վճարային հաշվեկշռի վերաբերյալ տվյալների հաշվարկներն իրականացվում են հիմք ընդունելով Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի» 5-րդ հրատարակություն ձեռնարկով սահմանված միջազգային մեթոդաբանության սկզբունքներն ու հասկացությունները:

Կատարելագործվել է ծառայությունների գծով արտաքին առևտրի ցուցանիշների հավաքագրման, մասնավորապես միջազգային զբոսաշրջության գծով, մեթոդաբանությունը:

Արտաքին առևտրի վիճակագրության մեջ համապատասխան տվյալներն ամփոփվում (խմբավորվում) են մաքսային վիճակագրության մեջ կիրառվող Ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգի երկնիշ դասակարգմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վճարային հաշվեկշռը» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտուրը» ամենամյա վիճակագրական ժողովածուները:

Զբոսաշրջության ոլորտի տվյալների բազայի ընդլայնման նպատակով՝ 2011թ. զբոսաշրջության բնագավառում իրականացվել է ընտրանքային հետազոտություն, որի արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

Տնտեսության տարբեր ոլորտներում ոչ ֆինանսական ակտիվներում (իրական ակտիվներում) իրականացված ներդրումների ծավալների հաշվառման, դրանց իրականացման ուղղությունների, ոլորտների, նպատակների, ֆինանսավորման աղբյուրների, ներդրումների վրա

ազդող գործոնների բացահայտման նպատակով՝ 2011թ. անց է կացվել իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտություն, որի արդյունքների հիման վրա պատրաստվել է «Իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտության զեկույցը»: Հետազոտությանը մասնակցել են հանրապետության տարածքում գործող 821 տնտեսավարող սուբյեկտ, որոնք կազմել են հաշվետու ժամանակաշրջանում ըստ բիզնես ռեզիստրի տվյալների գործող տնտեսավարող սուբյեկտների 23.7 տոկոսը:

## 2.8. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 2.8.1. Սոցիալական ոլորտ

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերում՝ միջազգային չափանիշների ներդրման, վիճակագրական աշխատանքների, ամփոփումների և վերլուծությունների մեթոդաբանությունների կատարելագործման նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը, վերանայվել և համապատասխան փոփոխությունների են ենթարկվել սոցիալական ոլորտի վիճակագրական դիտարկման փաստաթղթերն ու դրանց լրացման հրահանգները (մեթոդական ցուցումները):

Համապատասխան տեղեկատվական բազաների ամբողջականացման(այդ թվում՝ շրջանային կտրվածքով) և համալրման նպատակով իրականացվել են վիճակագրական հետազոտություններ, այդ թվում՝

Տնային տնտեսությունների ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների ընտրանքային հետազոտությունը անց է կացվել 2009թ, որի արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

2008-2009թվականներին ձևավորված ընտանիքների կենսապայմանների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով՝ 2010թ. անց է կացվել նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտությունը, որի արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

Բնակարանային ֆոնդի և բնակության պայմանների վերաբերյալ տեղեկատվական բազաների ընդլայնման նպատակով՝ Ծառայությունը համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ՝ որպես տվյալ ոլորտի վարչական վիճակագրության վարման գործառույթներ իրականացնող պետական մարմին:

Սոցիալական ոլորտի վիճակագրության տեղեկատվական բազայի ընդլայնման, վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման և տեղեկատվական հոսքերի ապահովման նկատառումներով պայմանավորված՝ Ծառայությունը համագործակցել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, առողջապահության, կրթության և գիտության, սոցիալական ապահովության նախարարությունների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, սպորտի պետական կոմիտեի, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության, փրկարար ծառայության հետ:

2009թ. հրատարակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-ժողովրդագրական վիճակը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է բնակչության թվաքանակի փոփոխությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, ինչպես նաև կրթության, առողջապահության, մշակույթի, իրավական ոլորտի, մշակույթի, սպորտի, հրապարակչական գործունեության, գրադարանային ֆոնդի օգտագործման և այլ ոլորտների վերաբերյալ տվյալները: 2010թ.-ից հրատարակվել է ամենամյա «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածուն», որն ընդգրկում է սոցիալական ոլորտի վերաբերյալ առավել ընդգրկուն տվյալները:

### 2.8.2. Բնապահպանություն

Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական վիճակագրության կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները ուղղորդված են եղել մի կողմից՝ համապատասխան ոլորտի վարչական վիճակագրության կատարելագործմանը (վարչական ռեզիստրների ներդրման ու կայացման համատեքստում), մյուս կողմից՝ պաշտոնական վիճակագրության շրջանակում հավաքագրվող ցուցանիշների համախմբի ընդլայնմանը:

Բնապահպանական վիճակագրության տեղեկատվական բազայի ընդլայնման, վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման և տեղեկատվական հոսքերի ապահովման նկատառումներով պայմանավորված՝ Ծառայությունը համագործակցել է Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ:

### *2.8.3. Տնային տնտեսությունների հետազոտություն*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման բացակայության և տարեկան պետական բյուջեներում համապատասխան միջոցների չնախատեսման պատճառով չի ներդրվել տնային տնտեսությունների հետազոտությունը:

Տնային տնտեսությունների հետազոտության անցկացմամբ պետք է հաշվարկվեին աղքատության ցուցանիշները, դեցիլային խմբերի, կվինտիլների և կվարտիլների սպառման կառուցվածքը (զամբյուղներ), եկամուտների, ծախսերի, սպառման կառուցվածքը, Լորենցի կորը, Ջինիի գործակիցը և այլ ցուցանիշներ:

### *2.8.4. Պարենային ապահովություն*

Պարենային ապահովության վիճակագրության վարման պահանջը ներդրվել է է 2009-2011թթ. եռամյա ծրագրով: Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի, անտառապահպանության, անտառապաշտպանության և անտառվերականգման միջոցառումների վերաբերյալ ցուցանիշները, որոնք հրապարակվել են «Պարենային ապահովություն» (հայերեն, անգլերեն) վիճակագրական տեղեկագրում: Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները՝ կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առանձին ապրանքախմբերի պարենային հաշվեկշիռները 2009-2010թ թ. համար:

### *2.8.5. Ժողովրդագրություն*

Յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ իրականացվել է հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառում: Հաշվառման արդյունքներով Ձև թիվ 9-Սպետական վիճակագրական հաշվետվություններ են ստացվել բոլոր համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, առկա և մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: Համադրվել, ճշգրտվել են բոլոր գյուղական բնակավայրերի վերոհիշյալ հաշվետվային ձևի հիմնական ցուցանիշները բնութագրող ամփոփ տեղեկագրերը:

Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է ԼՂՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ շրջանների և բնակչության թվաքանակի:

Ամսական պարբերականությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության մասին հաշվետվությունների, իսկ 2008թ.-ից՝ ակտերի հիման վրա կազմվել է բնակչության շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ ամսական վիճակագրական տեղեկատվությունն ըստ հանրապետության և շրջանների:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժինների անձնագրային ծառայություններից ստացված ձև թիվ 19 «Եկողի հասցեաթերթիկ»-երի և ձև թիվ 20 «Մեկնողի հասցեաթերթիկ»-երի տվյալների մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ ամսական օպերատիվ տվյալներ, որոնց հիման վրա կազմվել է բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ ամսական վիճակագրական տեղեկատվությունը:

Բնակչության բնական շարժը ներառող ցուցանիշների և միգրացիոն տեղաշարժերը բնութագրող ցուցանիշները արդիականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005թ. մարդահամարի հիմքով:

Բնական և մեխանիկական շարժերի ամսական օպերատիվ ցուցանիշների հիման վրա, եռամսյակային պարբերականությամբ, հաշվարկվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակի միջին ցուցանիշները՝ մեկ շնչի հաշվով ցուցանիշների հաշվարկների համար:



2008թ. զգալիորեն ընդլայնվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների կազմը՝ ներառելով ծնվածների և մահացածների թվաքանակը ըստ բնակավայրի ո սեռի, մահացածների մահվան պատճառների կառուցվածքը, տարիքային խմբերը, նորածինների և առավել հաճախ տրվող անունները և այլն:

2011թ. կազմվել են մահացության և կյանքի սպասվող տևողության աղյուսակներն ըստ սեռի և տարիքի և 2008-2011թթ. համար հաշվարկվել են կյանքի սպասվող տևողության ցուցանիշները:

Միգրացիոն տեղաշարժերում ներգրավված բնակչության առանձին համախմբերի ծավալային և որակական բնութագրիչների, նրանց սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական բնութագրերի գնահատման նպատակով՝ 2010թ. անց է կացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն, որի արդյունքներով պատրաստվել է համապատասխան վիճակագրական զեկույց:

2010 և 2011թթ. հրապարակվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու» և «Միգրացիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուները (2009թ. և 2010թ. արդյունքներով):

### ՍԱՍ 3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային վիճակագրության վարման նախադրյալների ապահովման, և որպես դրա նախապայման՝ շրջանային տեղեկատվական բազայի ստեղծման, ընդլայնման և կատարելագործման նկատառումներով պայմանավորված, վիճակագրական հրապարակումներում համապատասխան ցուցանիշներն ամփոփվել են ինչպես ըստ շրջանների, այնպես և այդ շրջաններում ըստ աշխատողների թվաքանակի բաշխվածության, իսկ առանձին ցուցանիշների գծով նաև գենդերային կտրվածքով:

2010թ. բոլոր գյուղական համայնքներին տրամադրվել են 2011-2015թթ. համայնքի նոր գրքեր և դրանց վարման ցուցումները, շրջկենտրոններում բոլոր համայնքների պատասխանատուների հետ նց է կացվել սեմինար-պարապմունքներ:

2010թ. 54 և 2011թ.՝ 33 գյուղական համայնքներում ցուցաբերվել է 2011-2015թթ. գյուղական համայնքներում վիճակագրական հաշվառման նպատակով վարվելիք գրքերի տրամադրման և դրանց վարման ցուցումների պարզաբանման սեմինարներ և վիճակագրական հաշվետվությունների լրացման և մեթոդական օժանդակություն: 2011թ. 53 գյուղական համայնքներում նորընտիր ղեկավարների հետ անց է կացվել համայնքի գրքերի վարման կարգի հրահանգավորում:

Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության յոթ շրջանների 159 գյուղական համայնքներում(այդ թվում՝ 2009թ.՝ 65, 2010թ.՝ 45, 2011թ.՝ 49) Ծառայության աշխատակիցների կողմից իրականացվել է Ծառայության նախագահի հրամանով հաստատված ծրագրով նախատեսված աշխատանքներ, ցուցաբերվել է համայնքի գրքերի և վիճակագրական հաշվետվությունների լրացման մեթոդաբանական օժանդակություն:

Բացի այդ, տեղեկատվության ամբողջականության ապահովման նպատակով 2009-2011թթ. հրապարակվել և շահագրգիռ սպառողներին են տրամադրվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները»(2011թ. նաև ռուսերեն) վիճակագրական ժողովածուները:

Տարածքային(ռեգիոնալ) վիճակագրության արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև Ծառայության շրջանային բաժինների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Դրանք նպատակուղղված են եղել այնպիսի հարցերի պարզաբանմանը, ինչպիսիք են վիճակագրության իրավական դաշտը, կիրառվող մեթոդաբանությունը և դրա զարգացման միտումները, տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները և այլն:

### ՍԱՍ 4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում «Վինդոու-2003» սերվերի վրա շարունակվել են վիճակագրական տվյալների բազաների ստեղծման աշխատանքները:

Ծառայության կորպորատիվ համակարգչային ցանցի կառուցմամբ պայմանավորված, տարածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի ընդլայնման և արդիականացման աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել ներքին Ինտրանետային էջի զարգացման ուղղությամբ, ընդլայնվել է ինտերնետային հրապարակումների բազան: Կատարվել է դրա սպասարկում՝

հակավիրուսային արդիականացնող ծրագրերի և առավել գործարծվող ծրագրերի պարբերաբար տեղակայում սերվերի վրա:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների պահանջմունքները բավարարելու նպատակով աշխատանքներ են իրականացվել Ծառայության պաշտոնական կայքի բարենորոգման ուղղությամբ:

Շարունակվել են Ծառայության Ասկերանի, Հաղրուքի, Մարտակերտի, Մարտունու շրջանային բաժինների գծով մոդեմային ժամանակակից կապի, իսկ Ստեփանակերտ քաղաքի, Շուշիի և Քաշաթաղի շրջանային բաժինների գծով մոլուխային կապի բարելավման աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Ծառայության համակարգի աշխատակիցների համակարգչային տեխնիկային տիրապետելու գծով վերապատրաստման, տվյալների բանկերի և ցանցերի հետ աշխատանքի ուսուցման աշխատանքները:

Վիճակագրական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար՝ աշխատանքներ են տարվել Ծառայության կենտրոնական ապարատը և տարածքային ստորաբաժանումները համակարգչային տեխնիկայով ապահովելու ուղղությամբ:

Իրականացվել են Ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի անվտանգության և անխափան գործունեության ապահովման աշխատանքները, ապահովվել են վիճակագրական գաղտնիք հանդիսացող տվյալների անանունությունն ու անվանագերծումը:

## ՄԱՍ 5. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Վիճակագրության բնագավառում համագործակցությունը ներառում է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար:

Ծառայությունը սերտորեն համագործակցել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, վարչական ռեգիստրեր վարող պետական մարմինների, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի և միջազգային մարդասիրական կազմակերպությունների (համապատասխան ներկայացուցիչների) հետ:

2009-2011թթ. Լեռնային Դարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված միջոցառումների ծրագրերի շրջանակներում էլ ծավալվել է վիճակագրական գործակցությունը:

Համագործակցության արդյունքն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար ցուցաբերվող մեթոդաբանական, մասնագիտական և կազմակերպատեխնիկական օժանդակությունը: Ավանդություն է դարձել երկու գերատեսչությունների աշխատակիցների փոխադարձ այցելությունները, փորձի փոխանակումը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ համագործակցությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է հետևյալ ուղղություններով.

- ժամանակակից տեղեկատվության պահանջներին համահունչ վիճակագրական արտադրանքի որակի բարձրացում,

- տվյալների ընդգրկման դաշտի ընդլայնում՝ տվյալների հավաքագրման կատարելագործում,

- կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- վիճակագրական տվյալների մշակման և ամբողջացման աշխատանքների մեթոդաբանական և կազմակերպական, վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովում,

- տեղեկատվական ռեսուրսների կառավարում, տեխնոլոգիաների ներդրում և զարգացում,

- վիճակագրական տեղեկատվության օպերատիվ և պարբերական փոխանակում, Ծառայության գրադարանի համալրում,

- միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդաբանության կիրառմամբ տվյալների արժանահավատության բարձրացում,

- կառուցվածքային և գործառնության կատարելագործման նպատակով տեխնիկական և խորհրդատվական աջակցություն:

Այսօր առկա իրողությունը Ծառայությանը զրկել է միջազգային համագործակցության հնարավորությունից, ուստի վիճակագրական աշխատանքների կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխան իրականացվում է միայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջոցով:

**ՄԱՍ 6. ԿԱԳԻԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ համագործակցության էական բաղադրիչ է անձնակազմի ուսուցումը: Ծառայության մասնագետները մասնակցել են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին և աշխատանքային քննարկումներին:

Ծառայությունում պարբերական բնույթ են կրել Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մասնագետների ուսուցման, հրահանգավորման և իրազեկման աշխատանքները:

Ծառայության աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է տնտեսագետների(ավելի քան 1/2-ը) և բարձրագույն կրթությամբ կադրերի գերակշռությամբ(2011թ.՝ 75%): Աշխատողների մոտ 2/3-ը (2011թ.՝ 66.7%) կանայք են:

Ծառայության համակարգի հաստիքների թվաքանակն ըստ տարիների բնութագրվել է հետևյալ համամասնություններով (հունվարի 1-ի դրությամբ).

	2009	2010	2011
կենտրոնական ապարատ	35	35	35
առանձնացված ստորաբաժանումներ	27	27	27
<b>Ընդամենը՝ որից</b>	<b>62</b>	<b>62</b>	<b>62</b>
<i>քաղաքացիական ծառայողներ</i>	48	48	48

«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են Ծառայության աշխատակազմի 28 և ատեստավորվել 21 քաղաքացիական ծառայողներ:

Ծառայության աշխատակազմի վերապատրաստված և ատեստավորված քաղաքացիական ծառայողների թվաքանակները ներկայացված են ստորև.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են			Ատեստավորվել են
	ընդամենը	որից		
		մասնագիտական	1-ին վերապատրաստում	
Բարձրագույն	-	-	-	-
Գլխավոր	9	7	2	3
Առաջատար	-	-	-	-
Կրտսեր	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>7</b>	<b>2</b>	<b>3</b>
Բարձրագույն	-	-	-	-
Գլխավոր	1	1	-	-
Առաջատար	3	3	-	5
Կրտսեր	6	6	-	9
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>14</b>
Բարձրագույն	1	1	-	1
Գլխավոր	-	-	-	2
Առաջատար	3	3	-	1
Կրտսեր	5	5	-	-
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>-</b>	<b>4</b>

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության համակարգի աշխատակիցների շարժը բնութագրվել է հետևյալ համամասնություններով.

	2009	2010	2011
Ընդունվել է աշխատանքի	21	22	12
<i>որից՝ քաղաքացիական ծառայողներ</i>	5	7	6
Ազատվել է աշխատանքից	21	18	10
<i>որից՝ քաղաքացիական ծառայողներ</i>	9	1	4

Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար անց է կացվել 10մրցույթ, այդ թվում՝ 2009թ.՝ 5, 2010թ.՝ 2, 2011թ.՝ 3:

«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել 2009թ.՝ 5, 2010թ.՝ 10, 2011թ.՝ 10 քաղաքացիական ծառայողի:

#### ՍԱՍ 7. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից հրապարակվել և վիճակագրական տեղեկատվության սպառողներին են տրամադրվել 506անվանում և 10535 տպաքանակով վիճակագրական և վերլուծական նյութեր, այդ թվում 2009թ.՝ 151 անվանում և 3353 տպաքանակով, 2010թ.՝ 165 անվանում և 3591 տպաքանակով, 2011թ.՝ 190 անվանում և 3591 տպաքանակով:

Յուրաքանչյուր տարի հրապարակվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք»(հայերեն, անգլերեն, ռուսերեն), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով»(հայերեն, 2011թ. նաև ռուսերեն) վիճակագրական ժողովածուները, «Լեռնային Ղարաբաղը թվերով»(հայերեն, անգլերեն), «Արցախի կանայք և տղամարդիկ»(հայերեն, անգլերեն) վիճակագրական գրքույկները, «Վիճակագրական հրապարակումների համացանկ» (հայերեն, անգլերեն) տեղեկագիրը:

Որպես Ծառայության օպերատիվ հիմնական վիճակագրական հրապարակում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցները (հայերեն, ռուսերեն) կառուցվում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների, հաշվարկների և Ծառայության կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի հիման վրա: 1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված՝ Տվյալների տարածման ընդհանուր համակարգի հատվածներին համապատասխան: Ձեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ԼՂՀ ԱՎԾ հրապարակումների ցանկը» հավելվածները:

Հաշվետու ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հետազոտության արդյունքներով հրապարակվել են 17, այդ թվում՝ 2009թ.՝ 6, 2010թ.՝ 6, 2011թ.՝ 5 վիճակագրական զեկույցներ:

Չանգվածային լրատվամիջոցների համար, եռամսյակային պարբերականությամբ, պատրաստվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», ամսական ներկայացմամբ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ճյուղերի առանձին ցուցանիշները», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը», «Սպառողական գների ինդեքսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանում» մամլո հաղորդագրությունները, ինչպես նաև ընտրանքային հետազոտության արդյունքներն ու թեմատիկ հաղորդագրություններ (մասնավորապես՝ արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, ֆինանսների վիճակագրության, սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մասին, գարնանացանի և աշնանացանի, հացահատիկային մշակաբույսերի և խաղողի բերքահավաքի ընթացքի վերաբերյալ):

Վիճակագրական տեղեկատվության մատչելիության ապահովման նկատառումներով պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Ծառայության գրադարանի պարբերաբար համալրման աշխատանքները: Ծառայության բաց գրադարանում 2009թ. տարեկազմին առկա է եղել 1009միավոր վիճակագրական գրականություն, իսկ 2011թ. տարեվերջին՝ 1608 միավոր:

Վիճակագրական գրականության ֆոնդը համալրվել է ինչպես Ծառայության վիճակագրական հրապարակումների, նույնպես և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումների և նրա միջոցով միջազգային կազմակերպությունների գրականության հաշվին:

Հաշվետու ժամանակաշրջանում, համաձայն պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի, շահագրգիռ մարմիններին են ներկայացվել վիճակագրական հրապարակումները(վիճակագրական ժողովածուները, վիճակագրական գրքույկները, տեղեկատվական եռամսյակային զեկույցները, վիճակագրական տեղեկագրերը, վիճակագրական զեկույցները, օպերատիվ տեղեկատվությունները):

Վիճակագրական տեղեկատվության մատչելիության ապահովման նկատառումներով պայմանավորված՝ Ծառայության պաշտոնական ինտերնետային էջում՝ <http://www.stat-nkr.am> , տեղադրվում և պարբերաբար թարմացվում են վիճակագրական բոլոր տեղեկությունները:


#### **ՍԱՍ 8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

Հաշվետու ժամանակահատվածում պետական վիճակագրության ոլորտում իրականացված վերը նշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից:

Ծառայության աշխատակազմի պահպանման համար սահմանված ծախսերի ֆինանսավորումը ըստ տարիների կազմել է. 2009թ.՝ 110233.8 հազ. դրամ, 2010թ.՝ 115689.5 հազ. դրամ և 2011թ՝ 124030.774 հազ. դրամ, նախատեսվածի, համապատասխանաբար, 120379.4 հազ. դրամի, 118281.9 հազ. դրամի և 125319.7 հազ. դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է, համապատասխանաբար, 91.6%-ով, 97.8%-ով և 98.9%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Ծառայությունը վճարովի ծառայություններ չի մատուցել:

**ՄԱՍ 9. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՆԱՐԿ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ**



**ԼՂՀ վիճակագրություն**


**Ընդհանուր տեղեկություն**  
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական համակարգն ամբողջովին կենտրոնացված է և ֆինանսավորվում է պետական բյուջեից:  
 Լեռնային Ղարաբաղի վիճակագրական ծառայության հիմնական առաքելությունն է հավաքագրել և հրատարակել վիճակագրական տվյալներ պետական մարմինների և հասարակության օգտագործման համար:  
 Լեռնային Ղարաբաղի վիճակագրական համակարգը բաղկացած է կենտրոնական ապարատից և վիճակագրության 8 շրջանային բաժիններից:

**Անվանումը՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

**Բարձրագույն մարմինը՝** ԼՂՀ վիճակագրության պետական խորհուրդ

**Ղեկավարը՝** ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը, որը միաժամանակ հանդիսանում է խորհրդի նախագահը:


Ղեկավարը և խորհրդի մնացած 4 անդամները նշանակվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ 6 տարի ժամկետով:



**ԼՂՀ վիճակագրություն**


**Դիրքը պետական կառավարման համակարգում**

**Վարչական դիրքը.** ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից: Այն պատասխանատու է վիճակագրական աշխատանքների ծրագրի շրջանակում սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրման համար:  
 Վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատվում է ԼՂՀ Ազգային ժողովի, իսկ դրա շրջանակում տարեկան ծրագրերը՝ Վիճակագրության պետական խորհրդի կողմից և ֆինանսավորվում՝ պետական բյուջեից:  
 ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կառավարման բարձրագույն մարմինը 5 անդամից բաղկացած Վիճակագրության պետական խորհուրդն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր:



**ԼՂՀ վիճակագրություն**

**Համառոտ պատմություն**  
 Լեռնային Ղարաբաղի վիճակագրական համակարգը պաշտոնապես սկսել է գործել 1924թ. մայիսի 15-ից: Առաջին վիճակագրական մարմինը կոչվել է ԼՂԽՄ կենտրոնական վիճակագրական բյուրո (ԿԿԲ): Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակումը պետական վիճակագրական մարմինը մի քանի անգամ վերակազմավորվել է (1930թ. հուլիսի 14-ից՝ ԼՂԽՄ մարզպալանին առընթեր տնտեսագիտական վիճակագրության բաժին, 1932թ.-ից՝ ԼՂԽՄ մարզային ժողովրդատնտեսական հաշվառման վարչության, 1941թ.-ից՝ ԼՂԽՄ մարզային վիճակագրական վարչություն, 1987թ.-ից՝ ԼՂԽՄ վիճակագրության վարչություն): 1992թ. հունվարի 1-ից այն վերակազմավորվել է ԼՂՀ վիճակագրության պետական վարչության, 1995թ.-ից՝ ԼՂՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչության: Վիճակագրական մարմնի պատմության մեջ ինտիտուցիոնալ առումով էական փոփոխություն էր 2002թ. ուժի մեջ մտած «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ նոր օրենքի հիման վրա ԼՂՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչության վերակազմակերպումը ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության: 2002թ. ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:



**ԼՂՀ վիճակագրություն**

**Իրավական հիմքերը**

- «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքն՝ ընդունված 30.04.2002թ.:
- «Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենքն՝ ընդունված 30.11.2001թ.:
- Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերը.
- Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր /օրենք/,
- Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր.
- Վիճակագրության պետական խորհրդի որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

**Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքները**

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող, ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը:

(Պետական վիճակագրության մասին ԼՂՀ օրենքի 11-րդ հոդված)



### ԼՂՀ վիճակագրություն


#### Հիմնական գործառնությունները

- վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրատարակում,
- համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում,
- վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում,
- տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում՝ միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կողմնորման համակարգին համապատասխան,
- վիճակագրական հետազոտությունների կազմակերպում,
- մարդահամարների անցկացում 10 տարին մեկ,
- քիզնե - ռեզիստի տեղում, վարում և արդիականացում,
- սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում,
- ամփոփ վիճակագրական տեղեկատվության թափանցիկության և մատչելիության ապահովում,
- համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:




### ԼՂՀ վիճակագրություն

#### Աշխատակիցների տոկոսային թաշվածությունն ըստ մասնագիտությունների (որակավորման) 2011թ.



### ԼՂՀ վիճակագրություն

#### Անձնակազմն ըստ կրթական մակարդակի 2012թ. հունվարի 1-ի դրությամբ



### ԼՂՀ վիճակագրություն

#### Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության համագործակցության ծրագիր

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համագործակցությունը ծավալվել է 2008թ. դեկտեմբերի 12-ին և 2009թ. նոյեմբերի 20-ին հաստատված Ծրագրերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ համագործակցությունը իրականացվել է հետևյալ ուղղություններով.

- կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- վիճակագրական տվյալների մշակման և ամբողջացման աշխատանքների մեթոդաբանական և կազմակերպական, վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովում,
- տեղեկատվական ռեսուրսների կառավարում, տեխնոլոգիաների ներդրում և զարգացում,
- վիճակագրական տեղեկատվության օպերատիվ և պարբերական փոխանակում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գրադարանի համալրում,
- կառուցվածքային և գործառնություն կատարելագործման նպատակով տեխնիկական և խորհրդատվական աջակցություն:



**ԼՂՀ վիճակագրություն**

**Իրականացված ընտրանքային հետազոտությունները 2009-2011 թթ.**

Բիզնես-ռեզիստրի հետազոտություն (ամենամյա)

Մանրածախ առևտրի սուբյեկտների ընտրանքային հետազոտություն

Բնակչությանը մատուցված անհատական ծառայությունների ընտրանքային հետազոտություն

Բնակչության կողմից հացի(հացաբուլկեղենի) սպառման ընտրանքային հետազոտություն (ամենամյա)

Գյուղատնտեսական մթերքների իրացման և նրանց արտադրության վրա կատարված ծախսերի հետազոտություն

Տնային տնտեսությունների ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների ընտրանքային հետազոտություն

Ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրանքային հետազոտություն

Նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն

ԼՂՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության գործունեության հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները

Իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտություն

Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը ԼՂՀ-ում միանվագ ընտրանքային հետազոտություն

*(Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը պետական բյուջեով հատկացված միջոցների կազմում վերոնշյալ վիճակագրական հետազոտությունների համար առանձնացված գումարներ չկան):*



**ԼՂՀ վիճակագրություն**

**Վերջին առանցքային հրապարակումները 2011թ.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք. 2004-2010 (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով. 2004-2010 (հայերեն, ռուսերեն)
3. Լեռնային Ղարաբաղը թվերով, 2011 (հայերեն, անգլերեն)
4. Արցախի կանայք և տղամարդիկ, 2011 (հայերեն, անգլերեն)
5. Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2011 (հայերեն, անգլերեն)
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2010
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքը, 2010
8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերությունը, 2010
9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսությունը, 2010
10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շինարարությունը, 2010
11. Գները և գների ինդեքսները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, 2006-2010
12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտուրը, 2010 (դասակարգման 2-նիշ մակարդակ).
13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, 2010
14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական վիճակը, 2010
15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու, 2010
16. Միգրացիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2010թ.
17. ԼՂՀ բնակչության թվաքանակը առ 01.01.2011թ.
18. Պարենային ապահովություն (հայերեն, անգլերեն)
19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը եռամսյակային տեղեկատվական զեկույց (հայերեն, ռուսերեն)
20. Չեկույց բիզնես-ռեզիստրի հետազոտության
21. Չեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտության
22. Չեկույց բնակչության կողմից հացի(հացաբուլկեղենի) սպառման ընտրանքային հետազոտության
23. Չեկույց աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը ԼՂՀ-ում միանվագ ընտրանքային հետազոտության
24. Չեկույց զբոսաշրջության բնագավառում ընտրանքային հետազոտության






### ԼՂՀ վիճակագրություն

#### Ֆինանսներ

Ծախսերի կառուցվածքը 2009-2011թթ.



- Աշխատավարձ
- Սոցիալական ապահովության վճարներ
- Բնակարանային տնտեսական կառուցման, ջրամուղ-կոյուղու և այլ ծառայությունների ծախսեր, գրասենյակային ապրանքներ, նյութեր և այլն
- Գործուղումներ և շրջագայություններ



### ԼՂՀ վիճակագրություն

#### Մարդահամար

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաջին մարդահամարն անց է կացվել 2005թ. հոկտեմբերի 18-ից 27 –ը:  
 Մշտական բնակչություն - 137737,  
 որից  
 քաղաքային - 70512  
 գյուղական - 67225  
 տղամարդիկ - 66555  
 կանայք - 71182  
 Առկա բնակչություն - 134862  
 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության, ք.Ստեփանակերտի և առանձին շրջանների ցուցանիշներով հրատարակվել են (թվով 9), հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով

Ինտերնետ՝ <http://stat-nkr.am/>



### ԼՂՀ վիճակագրություն

#### Միջազգային ստանդարտներ

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, ԼՂՀ ԱՎԾ կողմից պարբերական բնույթ են կրում համապատասխան դասակարգիչների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարի 2008թ. հունվարի 11-ի N1-2/07 հրամանով կիրառման մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ. նոյեմբերի 22-ի թիվ 231-Ն հրամանով հաստատված(ըրացումներով և փոփոխություններով հանդերձ) «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» ՀՂ- 005-2006-ը:

Մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են մասնատնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:



### ԼՂՀ վիճակագրություն


#### Գրադարան

ԼՂՀ ԱՎԾ-ում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են ԼՂՀ ԱՎԾ բոլոր վիճակագրական արտադրանքները: Վիճակագրական գրականությունը տարեցտարի համարվում է ՀՀ ԱՎԾ-ից ստացված ՀՀ և աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների նոր գրականության հաշվին:

Ինտերնետ: <http://stat-nkr.am/>

Հասցեն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն,  
 Ստեփանակերտ, փ.Ազատամարտիկների 5ա  
 ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն

**ՄԱՍ 10. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ**



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ**

**Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները**

(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.1994թ.)


- 1.Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
- 2.Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
- 3.Հաշվետվություն և թափանցիկություն
- 4.Միալ օգտագործման կանխում
- 5.Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
- 6.Գաղտնիություն
- 7.Օրենսդրություն
- 8.Ազգային համակարգում
- 9.Միջազգային ստանդարտների օգտագործում
- 10.Միջազգային համագործակցություն

**Եվրոպական վիճակագրական նորմերի կողբքում սահմանված սկզբունքները**

(ընդունված վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ.)

1. Մասնագիտական անկախություն
2. Տվյալների հավաքագրման իրավասություն
3. Ռեսուրսների բավարարվածություն
4. Որակի ապահովման պարտավորություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անաչառություն և Օբյեկտիվություն
7. Մեթոդաբանության հիմնավորվածություն
8. Վիճակագրական գործընթացների հիմնավորվածություն
9. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն
10. Արդյունավետություն
11. Արդիականություն
12. Եզրատություն և Հուսալիություն
13. Յուրաժամանակություն և Եզտապահություն
14. Փոխկապակցություն և Համադրելիություն
15. Մատչելիություն և Պարզություն

*«Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների անկախության, ամբողջականության և հաշվետու լինելու մասին» հանձնաժողովի կոմունիկատը Եվրամիության Պաշտոնական և Խորհրդին, Բրյուսել 25.05.2005*




**Վիճակագրության արդիականության, որակի, ամբողջականության և օգտավետության փոխկախվածության բնութագիրը**

Ժամանակ / Արդիականություն	Որակ	Ամբողջականություն	Օգտավետությունը (կիրառական նշանակությունը)
քիչ գերօպերատիվ	ցածր	թերի	զուտ միտումների մասով օպերատիվ վճիռների համար
միջին միջին օպերատիվ	միջին	միջին	որոշումների համար
երկար պակաս արդիական	բարձր	լիակատար	վերլուծությունների համար

**Հիմնական գործառույթները**

- վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրատարակում,
- համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում,
- վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում,
- տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում՝ միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կողավորման համակարգին համապատասխան,
- վիճակագրական հետազոտությունների կազմակերպում,
- մարդահամարների անցկացում 10 տարին մեկ,
- քիզմես-ռեզիստրի ստեղծում, վարում և արդիականացում,
- սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում,
- ամփոփ վիճակագրական տեղեկատվության թափանցիկության և մատչելիության սպասարկում,
- համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

**Ազդեցական գաճը՝ միկրոաստիճանի ծավալում տեղեկատվություն**






**Իրավական հիմքերը**

- «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքն՝ ընդունված 30.04.2002թ.
- «Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենքն՝ ընդունված 30.11.2001թ.
- Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրեր
  - Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր/օրենք/
  - Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր
- Վիճակագրության պետական խորհրդի որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը

**Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքները**

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը,
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին,
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը,
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը:

(«Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդված)



- Վիճակագրական նպատակով տեղեկատվության հավաքագրման գործիքները**
- 1. Համատարած հաշվառումների գործիք**
    - I. Մարդահամարներ
    - II. Գյուղատնտեսության համատարած հաշվառումներ
    - III. Տնտեսական համատարած հաշվառումներ
  - 2. Պարբերական հաշվառումների գործիք**
    - I. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
    - II. Պետական մարմիններ
    - III. Տեղական ինքնակառավարման մարմիններ
  - 3. Ընտրանքային հաշվառումների գործիք**
    - I. Ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ)
    - II. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
    - III. Պետական մարմիններ
    - IV. Տեղական ինքնակառավարման մարմիններ

**Վիճակագրական ռեսպոնդենտները՝ սկզբնական տեղեկատվություն ներկայացնողները**

- I. Ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ)*
- II. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր*
- III. Պետական մարմիններ*
- IV. Տեղական ինքնակառավարման մարմիններ*

**Սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների՝ ռեսպոնդենտների, սկզբնական (ինքնուրույնաբար) հաշվառման համակարգեր**

**1. Ֆիզիկական անձինք**

- 1.1 քաղաքացիաիրավական հարաբերությունները բնութագրող պաշտոնական փաստաթղթեր*
- 1.2 կանավոր և հայեցողական կարծիքներ, բանավոր պատասխաններ*

**2. Կազմակերպություններ**

- 2.1 հաշվապահական հաշվառման փաստաթղթեր*
- 2.2 հարկային հաշվառման փաստաթղթեր*
- 2.3 մաքսային հաշվառման փաստաթղթեր*
- 2.4 քվազիֆիսկալ ոլորտի հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեզիստրներ*
- 2.5 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր*

**Սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների՝ ռեսպոնդենտների, սկզբնական (ինքնուրույնաբար) հաշվառման համակարգեր**


**3. Պետական մարմիններ**

- 3.1 պետական լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեզիստրներ*
- 3.2 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր*

**4. Տեղական ինքնակառավարման մարմիններ**

- 4.1 տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեզիստրներ*
- 4.2 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր*

**Կապը վարչական ռեզիստրների հետ**



**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- Պաշտոնական վիճակագրությունը, որպես վիճակագրական տեղեկատվություն մատակարարող, իրավասու է օգտագործել և ձևափոխել վարչական ռեգիստրներից ստացված տեղեկատվությունը՝ վիճակագրական սահմանումներին և դասակարգիչներին դրանց համապատասխանատվությունն ու համադրելիությունը ապահովելու նպատակով:
- Այդ նպատակով ստացված տվյալները չեն փոխանցվում սկզբնական տեղեկատվությունը տնօրինողին (վարչական ռեգիստրին) կամ տրամադրվում երրորդ անձանց՝ վարչական նպատակներով օգտագործելու համար:

*Աղբյուրը՝ ՄԱԿ-ի պաշտոնական հիմնարար սկզբունքների մեկնաբանությունը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՀԲ, 2003*

**Վարչական ռեգիստրների ձևավորման և օգտագործման հետ կապված  
հիմնախնդիրներ**

- վիճակագրական և վարչական տեղեկատվության և դրանք կազմող սուբյեկտների հստակ օրենսդրական սահմանազատում,
- երկրում ամբողջական վարչական տեղեկատվական համակարգի ձևավորում,
- վիճակագրական նպատակներով վարչական տեղեկատվության անարգել օգտագործման ապահովում,
- արդի տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հիման վրա վարչական տեղեկատվության ոլորտի ընդլայնման խթանում,
- վարչական տեղեկատվության որակի բարելավում և մեթոդաբանության զարգացում,
- վիճակագրական նպատակներից վարչական աղբյուրների օգտագործման վիճակագրական մեթոդաբանության զարգացում և կատարելագործում:

*Աղբյուրը՝ ՄԱԿ-ի պաշտոնական հիմնարար սկզբունքների մեկնաբանությունը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՀԲ, 2003*

**Վարչական ռեգիստրների ձևավորման և օգտագործման հետ կապված  
հիմնախնդիրներ**

- Սպառողները պետք է ընկալեն վիճակագրական տեղեկատվություն մատուցողներին, մասնավորապես՝ ազգային վիճակագրական ծառայություններին, որպես որոշակի քաղաքականության կողմնորոշված պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող կազմակերպություններ,
- վարչական և վիճակագրական նպատակների և դրանց միջև կապերի բովանդակության հստակ սահմանում,
- վարչական և մամուլային շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությանը չներքաշելու երաշխիքների ապահովում,

*Աղբյուրը՝ ՄԱԿ-ի պաշտոնական հիմնարար սկզբունքների մեկնաբանությունը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՀԲ, 2003*

**Վերոնշյալ խնդիրների լուծմանը նպաստող գործոններ կարող են հանդիսանալ.**

- երկրում ընդհանուր հաշվապահական և վիճակագրական մշակույթը,
- երկրի վճարահաշվարկային համակարգի ամբողջականությունը,
- երկրի կառավարման համակարգում վերափոխումների ավարտունությունը,
- երկրի վճարահաշվարկային համակարգում միջազգային ստանդարտների և դասակարգումների օգտագործման աստիճանն ու մասշտաբայնությունը,
- ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով կիրառվող մեթոդաբանության համապիտանիությունը, հասանելիությունը և համադրելիությունը,
- պետական գրանցման, լիցենզավորման, թույլտվության և այլ ընթացակարգերի բարդության (պարզության) աստիճանը և գործիքները,
- տեղական ինքնակառավարման ինքնակարգավորման աստիճանը:

*Աղբյուրը՝ ՀԲ, Ֆրանսիայի վիճակագրական ծառայություն (INSEE), 2003*